Հողի կամ հեծելվորի ստացած թոշակի չափի մասին արաբական պատմիչ Աբուլֆեդան գրում է, որ հայոց մոտ սովորություն էր ձիավորին տալ ռոճիկ տարեկան 12 ոսկի, իսկ հետևակին 3 ոսկի և որ այդպես էր անում Գոգ Վասիլ իշխանի այրի տիկինը իր ամուսնու մահվանից հետո[60]։

Ֆեոդալական Եվրոպայում 13—14-րդ դդ. երկարատև պատերազմների ժամանակաշրջանում (Հարյուրամյա պատերազմը) ստիպված էին պահել մշտական բանակ. ընդ որում վասալի զինվորական ծառայության նախկին պայմաններն այլևս բավարար չէին։ Վերջինս սենյորից ստացած պարգևական հողի կամ ֆեոդի դիմաց որոշ ժամանակ մնում էր զինվորական ծառայության մեջ։ Այս պայմաններում մանր հողատերերից սկսեցին գանձել ռազմական հարկ, որը Արևմտյան Եվրոպայում կոչվում էր scutage կամ escuage, որը զինվորական պարտույթ էր[61]։ Հայտնի է, որ Կիլիկիան նույնպես, սկսած 13-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1375 թիվը, երբ այն կործանվեց, ստիպված էր պահել մշտական բանակ՝ դիմակալելու համար արտաքին թշնամիների մշտական հարձակումները։ Բացի այդ, որպես մոնղոլների դաշնակից, պարտավորված մասնակցում էր մոնղոլների՝ Սիրիայի և Միջագետքի պարբերաբար կրկնվող ռազմական արշավանքներին։ Ինչպես աղբյուրներն են հաղորդում, Կիլիկիան այդ արշավանքներին մասնակցում էր մշտական բանակով, որի թիվը հասնում էր 62 հազարի, որից 12 հազար հեծելվոր-ձիավորներ, իսկ 50 հազարը հետևակ[62]։ Այդպիսի մշտական բանակ պահելու համար Կիլիկիայի թագավորը և ֆեոդալ իշխանները մանր հողատերերից սկսեցին գանձել servitium ռազմական հարկը[63], որով հեծելվոր լիճ ճորտը պարտավորվում էր ռազմական ծառայություն կատարել և որը նման էր Արևմտյան Եվրոպայի վերոհիշյալ զինվորական պարտույթին։ Թեև այս հարկի մասին անմիջական վկայություններ չկան հայ մատենագրական աղբյուրներում, սակայն մեր կարծիքով Սմբատի «Դատաստանագրքի» 126-րդ հոդվածի «նոյնպէս ոչ ձի, ոչ սիլահ», չի կարող գրավ դնել, «զի կովոյ և ծառութեան ի պետք է ի պարոնութեաննի կարիքն»[64] հատվածը, շատ հավանական է, որ վերաբերում է զինվորական հարկին՝ վերևում հիշատակված servitium-ին։

Այսպիսով, Կիլիկիայի հայկական թագավորության գլխավոր ռազմական հենարանը հանդիսանում էին բազմաքանակ հողատեր ազատները՝ ձիավոր-հեծելվորները, որոնք կազմում էին Կիլիկիայի բանակի կորիզը՝ հայոց հեծյալը, որոնք զինվորական ծառայության դիմաց, բացի ֆեոդ-կալվածքից, սենյորից ստանում էին հոդ-ռոճիկը և արշավանքի ժամանակ ձեռք բերված ռազմական ավարի կամ ռազմագերիներից ստացված փրկագնի մի մասը։ Նրանք խաղաղ պայմաններում ապրում էին ֆեոդ-կալվածքներում, պարապում էին երկրագործությամբ՝ շահագործելով կախյալ ճորտ գյուղացիներին։

Բացի վերոհիշյալ ռազմական ծառայությունից, որպես սենյորի վասալներ, ձիավոր ասպետները արևմտաեվրոպական ասպետների նման կատա-

---

60 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 484։

61 Encyclopedia Britanica, Tome 6, p. 779.

62 Documents Armeniens, Paris, 1906, T. II, p. 170—171. Տե՛ս նույնպես Ղ. Ալիշան, էջ 554։ Tournebizee. Histoire politique et religieuse de L'Arménie, p. 210—212. Վարդան Մեծ, Պատմութիւն տիեզերական, Վենետիկ, 1862, էջ 151—152։

63 V, Langlois, Le trésor des chartes d'Arménie, p. 107.

64 Смбат Спарапет, Судебник, стр. 116.